ԱՎԴ4/0002/11/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի
ընդհանուր իրավասության դատարան,
նախագահող դատավոր՝ Հ.Պետրոսյան

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում,
նախագահող դատավոր՝ Ա.Վարդանյան

19 ապրիլի 2024 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դտարան),

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Դ.ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի՝ 2023 թվականի մարտի 21-ի որոշման դեմ դիմող Կարեն Խաչիկի Մարգարյանի ներկայացուցիչ Ա.Հակոբյանի հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2021 թվականի մարտի 27-ին ՀՀ ոստիկանության Վայքի բաժնում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 21150821 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի նոյեմբերի 20-ի որոշմամբ Արման Գառնիկի Խչեյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2. Վայոց ձորի մարզի դատախազության դատախազ Է.Ծատուրյանի՝ 2022 թվականի նոյեմբերի 3-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Խչեյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցված հանրային քրեական հետապնդումը դադարեցվել է՝ մեղսագրված արարքը նրա կողմից կատարված չլինելու հիմքով:

3. Վայոց ձորի մարզի դատախազ Ա.Ավետիսյանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ վերոնշյալ որոշման դեմ դիմող Կարեն Մարգարյանի ներկայացուցիչ Ա.Հակոբյանի բողոքը մերժվել է:

4. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2023 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ դիմող Կ.Մարգարյանի ներկայացուցիչ Ա.Հակոբյանի բողոքը մերժվել է:

5. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2023 թվականի մարտի 21-ի որոշմամբ դիմող Կ.Մարգարյանի ներկայացուցիչ Ա.Հակոբյանի հատուկ վերանայման վերաքննիչ բողոքը թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

6. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ դիմող Կ.Մարգարյանի ներկայացուցիչ Ա.Հակոբյանը բերել է հատուկ վերանայման վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի մայիսի 2-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

7. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանի՝ 2023 թվականի մարտի 21-ի որոշումն օրինական և հիմնավորված չէ, թույլ է տրվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, որն ազդել է վարույթի ելքի վրա:

Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը հանգել է սխալ հետևության՝ փաստելով, որ վերաքննիչ բողոքը ներկայացվել է 2023 թվականի մարտի 10-ին, քանի որ Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ վերաքննիչ բողոքն իր կողմից դատարան է ներկայացվել է 2023 թվականի մարտի 9-ին:

Մասնավորապես, ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանից պահանջվել և ստացվել են իր կողմից բողոքին կից ուղարկված ծրարների և փոստային անդորրագրերի պատճենները, ինչպես նաև ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի գրասենյակի պետի պաշտոնակատարի տեղեկանքի պատճենն այն մասին, որ գրասենյակի առաջատար մասնագետ Լ.Գրիգորյանի կողմից ներկայացվել է զեկուցագիր, համաձայն որի՝ 2023 թվականի մարտի 13-ին դատարանում ստացված հատուկ վերանայման բողոքները սկանավորելիս, սխալմամբ թիվ ԵԴ/1036/01/22 գործով հատուկ վերանայման բողոքին կցված անդորրագիրը և ծրարը կցել է ԱՎԴ4/0002/11/23 գործով հատուկ վերանայման բողոքին, իսկ ԱՎԴ4/0002/11/23 գործով հատուկ վերանայման բողոքին կից անդորրագիրն ու ծրարը՝ թիվ ԵԴ/1036/01/22 գործով հատուկ վերանայման բողոքին:

Բողոքաբերը նշել է, որ իր կողմից դատարան ուղարկված փոստային ծրարի և անդորրագրի պատճեններում հստակ երևում է, որ բողոքը փոստին հանձնվել է 2023 թվականի մարտի 9-ին, այսինքն՝ բողոքարկման՝ օրենքով նախատեսված ժամկետի ընթացքում: Ուստի, բողոքաբերը հանգել է հետևության, որ վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարան է ներկայացվել սահմանված ժամկետում:

Արդյունքում, բողոքաբերը եզրահանգել է, որ Վերաքննիչ դատարանը Կարեն Մարգարյանին զրկելով դատարանում իր դիրքորոշումը ներկայացնելու և

պաշտպանելու հնարավորությունից, խախտել է կողմերի հավասարության և մրցակցության դատավարական սկզբունքը, ոչ իրավաչափ կերպով սահմանափակել է առաջին ատյանի դատարանի դատական ակտը բողոքարկելու հնարավորությունը: Անհամաչափորեն սահմանափակվել են անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները, ինչպես նաև իր իրավաչափ շահերին վերաբերող հարցերն օրենքով սահմանված հիմքերով և կարգով վերադաս դատական ատյանի կողմից վերանայելու իրավունքը:

8. Բացի այդ, բողոքաբերն անդրադարձել է նաև Առաջին ատյանի դատարանի դատական ակտին՝ նշելով, որ Առաջին ատյանի դատարանը կայացրել է չպատճառաբանված, անհիմն, հետևաբար, ոչ իրավաչափ դատական ակտ, մասնավորապես, քրեական վարույթն իրականացվել է միակողմանի, լիարժեք չեն բացահայտվել դեպքի հանգամանքները, ձեռք բերված ապացույցներն ու հանգամանքները մեկնաբանվել են մեկուսի, ինչպիսի պայմաններում հնարավորություն է առաջացել որպեսզի իրական մեղավորներն ազատվեն քրեական պատասխանատվությունից, որի համար մի շարք էական հանգամանքներ ընդհանրապես անտեսվել են, կարևոր վարութային և քննչական գործողություններ չեն կատարվել, ինչի հետևանքով նախաքննությունը մտել է արհեստական փակուղի և վաղաժամ որոշում է կայացվել Արման Խչեյանի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ, և վերջինս անհիմն ազատվել է քրեական պատասխանատվությունից:

9. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը, վարույթի հանրային մասնակցին պարտավորեցնել կայացնել՝ Կ.Մարգարյանի իրավունքների խախտումը վերացնելուն ուղղված կոնկրետ վարույթային ակտեր՝ վերացնելով Վայոց ձորի մարզի դատախազ Է.Ծատուրյանի՝ 2022 թվականի նոյեմբերի 3-ին կայացված՝ Ա.Խչեյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

10. Առաջին ատյանի դատարանի՝ 2023 թվականի փետրվարի 8-ի որոշումը դիմող Կ.Մարգարյանի ներկայացուցիչ Ա.Հակոբյանը ստացել է 2023 թվականի փետրվարի 27-ին[1]:

10.1. «Հայփոստ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքէջի համաձայն՝ LO108460193AM բեռնային համարով առաքանին հաճախորդից ընդունվել է 2023 թվականի մարտի 9-ին[2]:

10.2. Սույն գործի նյութերում առկա փոստային անդորրագրի պատճենի համաձայն՝ դիմող Կ.Մարգարյանի ներկայացուցիչ Ա.Հակոբյանի հատուկ վերանայման վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում ստացվել է 2023 թվականի մարտի 13-ին[3]:

10.3. Վերաքննիչ դատարանի գրասենյակի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Աղայանի՝ 2023 թվականի մարտի 27-ի տեղեկանքի պատճենի համաձայն՝ գրասենյակի առաջատար մասնագետ Լ.Գրիգորյանի կողմից ներկայացվել է զեկուցագիր այն մասին, որ 2023 թվականի մարտի 13-ին, դատարանում ստացված հատուկ վերանայման բողոքները սկանավորելիս, սխալմամբ թիվ ԵԴ/1036/01/22 գործով հատուկ վերանայման բողոքին կցված անդորրագիրը և ծրարը կցել է ԱՎԴ4/0002/11/23 գործով հատուկ վերանայման բողոքին, իսկ ԱՎԴ4/0002/11/23 գործով հատուկ վերանայման բողոքին կից անդորրագիրն ու ծրարը՝ թիվ ԵԴ/1036/01/22 գործով հատուկ վերանայման բողոքին[4]:

10.4 Դիմող Կ.Մարգարյանի ներկայացուցիչ Ա.Հակոբյանի՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2023 թվականի փետրվարի 8-ի որոշման դեմ ներկայացված հատուկ վերանայման բողոքի ծրարների, ստացականների պատճենների համաձայն՝

---

[1] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 157:
[2] Տե՛ս https://www.haypost.am:
[3] Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 1-7:
[4] Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթ 24:

հատուկ վերանայման բողոքը փոստային ծառայությանն է հանձնել 2023 թվականի մարտի 9-ին[5]:

11. Դատական վերանայման բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ *«(…) Կ.Մարգարյանի ներկայացուցիչ Ա.Հակոբյանն Առաջին ատյանի դատարանի վիճարկվող որոշումը ստացել է դեռևս 2023 թվականի փետրվարի 27-ին, որի պայմաններում բողոքարկման ժամկետի հոսքը պետք է հաշվարկվեր այդ օրվա գիշերվա զրո ժամից և ավարտվեր 2023 թվականի մարտի 9-ին՝ ժամը 24:00-ին:*

Մինչդեռ, բողոքաբերը հատուկ վերանայման բողոքը փոստային ծառայությանը հանձնել է 2023 թվականի մարտի 10-ին, այսինքն՝ բողոքարկման ժամկետը լրանալուց 1 օր անց:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ հատուկ վերանայման բողոք ներկայացնելիս բողոքաբերը (…) հատուկ վերանայման բողոքը ներկայացրել է ժամկետանց, բողոքում չի ներկայացրել բողոքարկելու դատավարական ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու ու վերականգնելու միջնորդություն և այն հիմնավորող փաստարկներ, ուստի՝ Կ.Մարգարյանի ներկայացուցիչ Ա.Հակոբյանի ներկայացրած հատուկ վերանայման բողոքն անհրաժեշտ է թողնել առանց քննության (…)»[6]:

<u>Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք դիմող Կ.Մարգարյանի ներկայացուցիչ Ա.Հակոբյանի հատուկ վերանայման վերաքննիչ բողոքը ժամկետանց լինելու հիմքով առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը:

13. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

---

[5] Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 25-26:
[6] Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 14-15:

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ *«Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:*

Վճռաբեկ դատարանը, արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող՝ դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում անդրադառնալով դատական բողոքարկման դատավարական ժամկետների պահպանության ստուգման հարցին, արձանագրել է, որ անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի անհարկի սահմանափակումները բացառելու նպատակով ներկայացված բողոքը ժամկետանց լինելու հիմքով առանց քննության թողնելու մասին դատարանների եզրահանգումները պետք է կառուցվեն հստակ և որոշակի փաստական հանգամանքներից բխող հետևությունների վրա՝ ապահովելու համար բողոքարկման իրավունքի սահմանափակման և հետապնդվող նպատակի միջև համարժեք հարաբերակցությունը[7]:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 3. Ժամկետն օրերով հաշվելիս ժամկետի ընթացքն սկսվում է առաջին օրվա գիշերվա զրո ժամից և վերջանում վերջին օրվա գիշերվա ժամը 24.00-ին: Ժամկետն ամիսներով կամ տարիներով հաշվելիս ժամկետը վերջանում է վերջին ամսվա համապատասխան օրը, իսկ եթե տվյալ ամիսը չունի համապատասխան ամսաթիվ, ապա ժամկետն ավարտվում է այդ ամսվա վերջին օրը: Եթե ժամկետը լրանալու օրը ոչ աշխատանքային է, ապա ժամկետի վերջին օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը, սակայն այս կանոնը չի կիրառվում անձի ազատության սահմանափակման հետ կապված ժամկետները հաշվելիս:*

4. Ժամկետը բաց թողնված չի համարվում, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին է հանձնված ժամկետը լրանալուց առաջ, (…)»:

---

[7] Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Վարդգես Գասպարիի* գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԵԱՔԴ/0067/11/16 որոշումը, 15-րդ կետ, *Անդրանիկ Խաչատրյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 7-ի թիվ ՇԴ2/0049/01/17 որոշումը:

Նույն օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման բողոքը բերվում է համապատասխան դատական ակտն ստանալու օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում»:*

15. Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, սահմանելով՝ դատական ակտերի բողոքարկման հնարավորություն, միևնույն ժամանակ նախատեսել է դրա իրականացման հստակ կանոններ: Այսպես, ընդհանուր կանոնի համաձայն՝ ժամկետն օրերով հաշվելիս ժամկետի ընթացքը սկսվում է առաջին օրվա գիշերվա զրո ժամից և վերջանում վերջին օրվա գիշերվա ժամը քսանչորսին:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանի՝ 2023 թվականի փետրվարի 8-ի որոշումը դիմողի ներկայացուցիչ Ա.Հակոբյանը ստացել է **2023 թվականի փետրվարի 27-ին**[8]**,**

- «Հայփոստ» ՓԲ ընկերությունը դիմողի ներկայացուցիչ Ա.Հակոբյանից առաքանին ընդունել է **2023 թվականի մարտի 9-ին**[9],

- 2023 թվականի մարտի 13-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում ստացվել է դիմող Կ.Մարգարյանի ներկայացուցիչ Ա.Հակոբյանի հատուկ վերանայման վերաքննիչ բողոքը[10],

- Վերաքննիչ դատարանի գրասենյակի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Աղայանի՝ 2023 թվականի մարտի 27-ի տեղեկանքի համաձայն՝ գրասենյակի առաջատար մասնագետ Լ.Գրիգորյանի կողմից ներկայացվել է զեկուցագիր այն մասին, որ 2023 թվականի մարտի 13-ին, դատարանում ստացված հատուկ վերանայման բողոքները սկանավորելիս, սխալմամբ թիվ ԵԴ/1036/01/22 գործով հատուկ վերանայման բողոքին կցված անդորրագիրը և ծրարը կցել է թիվ ԱՎԴ4/0002/11/23 գործով հատուկ վերանայման բողոքին, իսկ թիվ ԱՎԴ4/0002/11/23 գործով հատուկ վերանայման բողոքին կից

---

[8] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 10.1-րդ կետը:
[10] Տե՛ս սույն որոշման 10.2-րդ կետը:

անդորրագիրն ու ծրարը՝ թիվ ԵԴ/1036/01/22 գործով հատուկ վերանայման բողոքին[11],

- Վերաքննիչ դատարանը 2023 թվականի մարտի 21-ի որոշմամբ դիմող Կ.Մարգարյանի ներկայացուցիչ Ա.Հակոբյանի հատուկ վերանայման բողոքը թողել է առանց քննության՝ փաստելով, որ նա Առաջին ատյանի դատարանի վիճարկվող որոշումը ստացել է դեռևս **2023 թվականի փետրվարի 27-ի**ն, որի պայմաններում բողոքարկման ժամկետի հոսքը պետք է հաշվարկվեր այդ օրվա գիշերվա զրո ժամից և ավարտվեր **2023 թվականի մարտի 9-ին՝ ժամը 24:00-ին:** Մինչդեռ, բողոքաբերը հատուկ վերանայման բողոքը փոստային ծառայությանը հանձնել է **2023 թվականի մարտի 10-ին**[12]:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 13-16-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դիմող Կ.Մարգարյանի ներկայացուցիչ Ա.Հակոբյանը, Առաջին ատյանի դատարանի որոշումը 2023 թվականի փետրվարի 27-ին ստացած լինելու պարագայում, վերաքննիչ բողոքը «Հայփոստ» ՓԲ ընկերությանը ներկայացրել է 2023 թվականի մարտի 9-ին, սակայն դատարանի գրասենյակի աշխատակցի թույլ տված սխալի արդյունքում՝ մեկ այլ գործով անդորրագրի հիման վրա բողոքի ժամկետը հաշվելով 2023 թվականի մարտի 10-ից, Վերաքննիչ դատարանը պաշտպանի բողոքը թողել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

18. Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դիմող Կ.Մարգարյանի ներկայացուցիչ Ա.Հակոբյանը, 2023 թվականի մարտի 9-ին վերաքննիչ բողոքարկման 10-օրյա ժամկետի պահպանմամբ է ներկայացրել հատուկ վերանայման բողոքը, սակայն Վերաքննիչ դատարանը դատական ակտի բողոքարկման ժամանակային սահմանափակումները կիրառել է ոչ իրավաչափորեն՝ հատուկ վերանայման բողոք ներկայացնելու ժամկետի վերաբերյալ հանգելով սխալ եզրահանգման:

---

[11] Տե՛ս սույն որոշման 10.4-րդ կետը:
[12] Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ դիմող՝ Կ.Մարգարյանի ներկայացուցիչ Ա.Հակոբյանի հատուկ վերանայման վերաքննիչ բողոքը ժամկետանց լինելու հիմքով առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր չէ:

19. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարույթով Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է վարույթի ելքի վրա, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ և 362-րդ հոդվածների, հիմք է Վերաքննիչ դատարանի՝ 2023 թվականի մարտի 21-ի որոշումը բեկանելու և վարույթը նույն դատարան՝ նոր քննության փոխանցելու համար[13]: Վերաքննիչ դատարանը նոր քննության ընթացքում պետք է քննարկման առարկա դարձնի վերաքննիչ բողոքը և հանգի համապատասխան եզրակացության:

20. Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ պարագայում հնարավորություն չունի անդրադառնալու բողոքաբերի՝ սույն որոշման 8-րդ կետում մատնանշված փաստարկներին, նկատի ունենալով, որ նրա վերաքննիչ բողոքը քննարկման առարկա չի դարձվել Վերաքննիչ դատարանում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ 361-րդ, 363-րդ և 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի փետրվարի 8-ի որոշման դեմ դիմող Կարեն Խաչիկի Մարգարյանի ներկայացուցիչ Ա.Հակոբյանի հատուկ վերանայման

[13] Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Հրայր Հովսեփյանի* գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 և *Ավաթ Ամինի* գործով 2023 թվականի հունվարի 25-ի թիվ ԵԴ/0752/06/22 որոշումները:

բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2023 թվականի մարտի 21-ի որոշումը բեկանել և վարույթը փոխանցել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Դ.ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

_____ Ս.ՕՀԱՆՅԱՆ